



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



6

0

11

712



6



26 MAY 2005

003  
Σ-92  
41

ԻՍԸՆԿ ԵՄՈՒԹՒՆՆԵՐ



# 1500 ՏԱՐԻ ԱՌԵՋ

(404—1904)

## ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԳԻԻՏԸ

1003  
11041



Տ Փ Խ Ի Ս

Արագածիս Ա. Բուժաթիւյաճէի, Նիկ. փ. 21.

1904



Дозволено цензурою, Тифлист, 23 Января  
1904 г.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց այբուբենի գիտը, որ տեղի ունեցաւ հինգերորդ դարի հենց սկզբին, մեր պատմագիրների և բանասէրների ուշադրութեան առարկայ է եղել միշտ սակայն երկար ժամանակ անորոշ էր մնացել տառերի գիտի իսկական տարեթիւը:

Անցեալ դարում առհասարակ ամենքն ընդունում էին, հետեւելով Չամչեանին, որ տառերի գիտը տեղի է ունեցել 406 թուին:

1892 թ. տպագրուած մեր ընդարձակ աշխատութեան մէջ—«Հայոց գիրը»—պատմական փաստերով մանրամասն ապացուցեցինք, որ հայոց այբուբենի գիտը տեղի պէտք է ունեցած լինի 404 թուին: Հայ բանասիրութիւնը համոզեցուցիչ համարելով մեր ապացոյցները, ընդունեց, որ սբ. Մեսրոպը մեր այբուբենը կազմել է



404 թ. և այդ հիման վրայ ներկայ  
1904 թ. համարում է հայոց տառերի  
գիտի հազար հինգհարիւրամեայ տա-  
րեդարձը:

Այս, հայ գրականութեան համար  
նշանաւոր, տարեդարձի առիթով հրա-  
տարակում ենք այս գրքոյկը, որ պա-  
րունակում է մի համառօտ ակնարկ  
գրի ու գրի տեսակների մասին ընդ-  
հանրապէս և հայոց այբուբենի գիտի  
պատմութիւնը՝ հիւսուած մեր պատ-  
մագիրների ասածներից:

Բանասիրութեանը սրանով մենք  
ոչինչ նոր բան չենք տալիս, որովհե-  
տե աս բոլորը պարունակում է ար-  
դէն մեր «Հայոց գիրը» աշխատութեան  
մէջ. մեր նպատակն է ընդհանրութեա-  
նը մատչելի անել նիւթը, որովհետե  
«Հայոց գիրը» իբրև գիտական մեթօ-  
դով մշակուած մի մենագրութիւն,  
մատչելի չէ ժողովրդին:

Իսահակ Յարութեան

1904 թ. յունուարի 8

Տպէիս.



Ա.

Մարդու բնածին ընդունակութիւն-  
ներից մէկն է միտք արտայայտելու  
կարողութիւնը. առանց այս ընդունա-  
կութեան մարդը հազիւ թէ զանազա-  
նուէր կենդանիներից: Իւր միտքն ար-  
տայայտելու համար մարդս չորս միջոց  
ունի. ա նշանացի խօսակցութիւն, ը.  
պատկերներ, գ. բառեր և ղ. գիր:

Գիրը կամ գրելու արուեստը շատ  
մեծ նշանակութիւն ունի մարդկային  
քաղաքակրթութեան զարգացման հա-  
մար. գրի շնորհիւ կարելի է լինում  
ուսումնասիրել անցեալ ժամանակների  
պատմութիւնը, գրի միջնորդութեամբ  
միմեանցից հեռու գտնուող ազգերի և  
անհատների գաղափարները շփուում են  
միմեանց հետ. գրի միջոցով հեշտ է



տարածւում ուսումն ու գիտութիւնը  
 և այլն: Առանց գրի մարդկային քա-  
 ղաքակրթութիւնը շատ դանդաղ քայ-  
 լերով առաջ կգնար: Գրի գարգացումը  
 ցոյց է տալիս մարդկային հոգու զար-  
 զացման աստիճանը. գիրն աչքի լեզուն  
 է և խօսքը ներկայացնում է տեսանե-  
 լի նշաններով: Ուրիշի ասածը փոխա-  
 նակ ականջով լսելու՝ ըմբռնում ենք  
 աչքով: Թէև այժմ գիրը սովորական  
 բան է դարձել մեզ համար, բայց դեռ  
 կան շատ վայրենի ազգեր, որոնց հա-  
 մար գիրը հրաշքների կարգումն է դեռ:  
 Հնդկիկները չկարողանալով ըմբռնել՝  
 թէ եւրոպացիներն ինչպէս են կարո-  
 ղանում ստացած նամակից իմանալ  
 հեռու տեղեր պատահած գէպերը,  
 նամակներն իրենց ականջին էին դը-  
 նում, որ տեսնեն թէ իրենք էլ մի  
 բան կհասկանան: Մի եւրոպացի պե-  
 րուացու ձեռքով մի կողով պտուղ է  
 ուղարկում իւր բարեկամին և հետն էլ

նամակ տալիս, որի մէջ գրուած է լի-  
 նում պտուղների քանակութիւնը: Ճա-  
 նապարհին պերուացու ախորժակը բա-  
 ցուելով՝ պտուղներից մի քանիսն ա-  
 նուշ է անում և մնացածը տեղ հասց-  
 նում: Ստացողը տեսնելով, որ պտուղ-  
 ները պակաս են, նախատում է վայ-  
 րենուն. վերջինս զարմանալով՝ թէ նա  
 ինչպէս իմացաւ իւր արարքը, եզրա-  
 կացնում է, որ իւր տարած նամակը  
 պէտք է մատնած լինի, այդ պատճա-  
 ռով մի ուրիշ անգամ պտուղ և նա-  
 մակ տանելու ժամանակ, պտուղներն  
 ուտելիս՝ նամակը դնում է մի մեծ քա-  
 ըի տակ, հաստատ համոզուած լինելով,  
 որ նամակը չտեսնելով իւր արարքը,  
 այլ ևս չէր կարող մատնել իրեն: Անգ-  
 լիացի դոկտոր Մարտինը պատմում  
 է, որ երբ մի անգամ իւր նամակն ըն-  
 կաւ Տօնգա կղզու վայրենի իշխանի  
 ձեռքը, վերջինս սկսեց դիտել նամակն  
 ամենայն կողմից, բայց ոչինչ չհասկա-



նալով՝ տուեց իւր մօտն եղած անգլիացուն և պահանջեց իմանալ թէ ինչ բան է այդ: Անգլիացին թարգմանեց նամակի մէջ գրուածը. իշխանը զարմանալով՝ թէ այդ թղթի կտորն ինչպէս կարող է այդպիսի մտքեր հարողել, վերցնում է կրկին նամակը և ապշած հետազօտում: Յետոյ կանչում է նամակի տիրոջը և հրամայում մի բան գրել. Մարտինի հարցման՝ թէ ինչ գրեմ, իշխանը պատասխանում է. «ինձ գրիր»: Դր. Մարտինը գրում է իշխանի անունը. վայրենին կանչել է տալիս մի ուրիշ անգլիացի և հրամայում կարգալ. անգլիացին հարկաւ կարդում է իշխանի անունը, իսկ սա ապշած մնալով խլում է թղթի կտորը կարգացողի ձեռքից և ամեն կողմը շրջելով բացագանչում է. «սա ոչ ինձ է նմանում և ոչ մի այլ անձի, ո՛ր եմ աչքերը, ուր իմ գլուխը, ո՛ր եմ ոտքերս, ինչպէս կարելի է իմանալ,

որ այս ես եմ»: Մի ուրիշ անգամ նա գրել է տալիս մի այլ կոյր իշխանի անուն և երբ անգլիացին կարդում է այդ անունը, նա հարցնում է. «այդ մարդը կոյր է թէ ոչ»:

Բ.

Գիրը բաժանուում է երկու տեսակի. ա. գաղափարագիր և բ. նշխնագիր. առաջինն արտայայտում է գաղափարներ, իսկ երկրորդը հնչիւններ: Գաղափարները կարելի է արտայայտել պատկերներով և նշաններով, այդ պատճառով և գաղափարագիրը լինում է ա. պատկերագիր և բ. նշանագիր: Հրնչիւնները կարելի է արտայայտել վանկերով և տառերով, ուստի և հնչիւնագիրը լինում է ա. վանկագիր և բ. տառագիր:

Դրի էութեան գլխաւոր յատկանիշն է գաղափարների կապակցութիւ-



նը. իւրաքանչիւր զիր այնպիսի յատկութիւն պէտք է ունենայ, որ ցանկացած մտապատկերներն արթնացնէ մեր հոգու մէջ, այսինքն ամեն մի գրի արտաքին տեսքը պէտք է մի որոշ գաղափար առաջ բերէ մեր մտքի մէջ: Մեր գիտակցութեան մէջ մի որ և է առարկայի մտապատկերն ամենից հեշտութեամբ առաջ կբերէ նոյն իսկ այդ առարկայի նկարը կամ *պատկերը*. նկարների միջոցով որ և է գաղափար ուրիշին հաղորդելու արուեստը կոչւում է *պատկերագիր*: Պատկերագիրն է այն *սկզբնական* միջոցը, որով ազգերն իւրեանց մէջ պատահած իրողութիւններն արտայայտել են *գրաւոր կերպով*: Նշանաւոր իրողութիւնները յետագաներին հաղորդելու ձգտումը նոյնչափ հին է, որչափ մարդկային ցեղի սկզբնական զարգացումը: Սկզբնական ժամանակներում մարդկութիւնը միմիայն մի միջոց ունէր այդ ձըգտ-

մանը բաւականութիւն տալու. այդ միջոցն էր *բերանացի աւանդութիւնը*: Այն ժամանակուայ մարդիկ շատ երկար ապրելով՝ որդիքը, թոռները, թոռան թոռները կարող էին իրենց մեծ պապի շուրջը ժողովուել և նրա պատմածները լսելով՝ իւրեանց թոռներին աւանդել: Այսպիսով բերանացի աւանդութիւնը կատարելապէս բաւականութիւն էր տալիս սկզբնական մարդկանց վերոյիշեալ ձգտմանը. երկրագործական և հովուական կեանքը միջոց էր տալիս նրանց՝ ազատ երգելու և այդ երգերը «բերնէ-բերան» անցնելով դառնում են ժողովրդական երգեր, որոնց մէջ և սարունակւում էր այն ժամանակի ամբողջ պատմութիւնը:

Որ և է իրողութիւն *գրով յետագաներին հաղորդելու* առաջին աստիճանն է *պատկերագիրը*. վայրենի ցեղերն այսօր էլ գործ են դնում պատկերագիր՝ համարեա՛ երկրիս ամեն մա-



սերում և ամեն տեղ միևնույն սկզբունքով. պատկերները գծագրում են կարծր և կակուղ մարմինների վրայ՝ առարկաների նմանութեամբ: Ամերիկայի հնդիկները պատկերագիրը գծագրում են սովորաբար բարձր ժայռերի վրայ. նշանաւոր գիտնական Հումբօլտը պատմում է, որ երբ ինքը Օրինոքոյի հնդիկներին մի անգամ հարցրել է՝ թէ ինչպէս են կարողացել այնքան բարձր ժայռերի վրայ պատկերներ գծագրել, նրանք ժպտալով պատասխանել են՝ թէ իրենց նախահայրերը ջրի վարար ժամանակը նաւակներով են հասել մինչև այնտեղ:

Պատկերագրի պատմական երկիրն է Եգիպտոսը. ոչ մի երկիր այնչափ հարուստ չէ պատկերագիր արձանագրութիւններով, որչափ փարաւոնների հայրենիքը. այդ արձանագրութիւնները զարդարում են Եգիպտական բուրգերի պատերը, յիշատակարաններն ու

մումիաներ պարունակող դամբարաններն ու դագաղները: Եգիպտական պատկերագրերը կոչւում են «հիէրոգլիֆ», որ նշանակում է «սրբազան փորագրութիւն»: Հիէրոգլիֆները բաղկացած են մարդկանց, կենդանիների, դոցա մասերի, բոյսերի, երկնային մարմինների, զէնքերի, գործիքների և այլ առարկաների պատկերներէց:

Երկար դարերի ընթացքում եգիպտական պատկերագրերն անլուծանելի էին մնում, մինչև որ 1799 թ. Ֆրանսիացի Բուսարդը գտաւ մի արձանագրութիւն, որ գրուած էր երեք տեսակ գրով. պատկերագրով, եգիպտական «ժողովրդական» կոչուած գրով և յունարէն տառագրով: Անձ այս արձանագրութիւնն եղաւ առաջին բանալին, որ բացեց Եգիպտական գրական և պատմական գանձերի փակուած դռները: Այս արձանագրութիւնների բովանդակութիւնը լոյս ձգեց



պատմական այնպիսի շրջանների վրայ, որ նախապատճառն էին համարուած: — Գիցեհի բուրգերն, իրենց բազմաթիւ պատկերագրերով, շինուած են Գրիստոսից 6000 տարի առաջ:

### Գ.

Վանկազրի կարգին է պատկանում նաև սեպագիրը կամ ընկռագիրը, որի ընթերցումը 19-րդ դարի նշանաւոր գիւտերի շարքը պէտք է դասել: Սեպագիր արձանագրութիւններն առաջին անգամ գտնուեցան Պերսեպոլիսի և հին Պարսկաստանի ուրիշ քաղաքների աւերակների մէջ. այս արձանագրութիւնների ընթերցման բանալին գտաւ գերմանացի Փրիզլիխ Գրօտէնֆէնզը: Այնուհետև գտնուեցան նաև ասորա-բաբելական սեպագիր արձանագրութիւնները, որոնց ընթերցումը յաջողուեց պարսկական սեպագրերի շնորհիւ:

Սեպագիր արձանագրութիւնների ընթերցման շնորհիւ գերեզմանից յարութիւն առաւ ամբողջ երեսուն դարերի կորած պատմութիւնը: Նինուէ քաղաքի աւերակների հետազօտութեան նշանաւոր հետեանքներից մէկն էր արքայական մատենագարանի մնացորդների գիւտը. այդտեղ ի միջի այլոց գտնուեցան և այնպիսի այբբենաբաններ, որոնք բացատրում էին սեպագրերի ընթերցումը:

Հայաստանի զանազան կողմերում գտնուած սեպագիր արձանագրութիւնները ակնյայտնի վկայում են, որ սեպագիրը գործածական է եղել մեր երկրում: Այս արձանագրութիւններից առաջին տեղն են բռնում Վանայ սեպագիրները:

Մովսէս Խորենացին զարմանալի ճշտութեամբ նկարագրելով Վանայ գիրքն և ամբողջ շինութիւնը Չամբրամին վերագրելով՝ յիշում է, որ այդ



փառասէր թագուհին քարերի վրայ  
զրել տուեց և միևնոյն զրով յիշատա-  
կարաններ և արձաններ կանգնեցրեց:  
Արդէն Խորենացու ժամանակ այդ սե-  
պագիր արձանագրութիւնները չէին  
կարդացուած և հագիւ 19-րդ դարում  
Եւրոպացի գիտնականները կարողա-  
ցան կարդալ՝ ասորա-բարելական սե-  
պագիրների օգնութեամբ: Յատկապէս  
Վանայ սեպագիր արձանագրութիւն-  
ները մեծ դժուարութեամբ են կար-  
դացուած, որովհետև ճիշտ յայտնի չէ,  
թէ զրանք ինչ լեզուով են գրուած:  
Գիտնականներից ոմանք հայերէն լե-  
զուով էին ուզում կարդալ, բայց յա-  
ջողութիւն չունեցան. ոմանք էլ վրա-  
ցերէնին աւելի մօտ գտան, սակայն  
այս ենթագրութիւնն ևս փաստերով  
չհաստատուեց:

Գիտնականներից ոմանք ենթա-  
գրում էին, որ սեպագիրը ծագում է  
եզիպտական պատկերագրից, բայց

վերջը պարզուեց, որ սեպագիրն առա-  
ջացել է համատական կոչուած պատ-  
կերագրից: Սեպագրի ամբողջ այբու-  
րենը բաղկացած է մի սեպաձև նշանի  
հորիզոնական, ուղղահայեաց կամ ծը-  
ռուած զիրքերի բարդութիւններից:  
Սեպագրերից մի քանիսն իսկական  
գաղափարներ են արտայայտում, իսկ  
հասարակ նշաններն ըստ մեծի մասին  
միակ նշաններ կամ ձայնաւոր ու բա-  
ղաձայն տառերից կազմուած վանկեր  
են:

Սեպագիրը գործածական է եղել  
Քրիստոսից 1500—2000 տարի առաջ.  
ցայժմ գտնուած ամենանոր ժամանա-  
կի սեպագիր արձանագրութիւնը կրում  
է պարթևների Պակորոս արքայի ա-  
նունը, որ իշխեց 77—111 թ. Քրիս-  
տոսից յետոյ:

Սեպագիր արձանագրութիւնները  
գտնուում են ժայռերի և աղիւսների  
վրայ. հին ժամանակներից սկսած ար-

1003  
11041



դէն արեւելեան արքաները ցանկանում էին իրենց յաղթութիւններն ու փառքը յաջորդ սերունդներին յայտնել. նշանք նկարագրել էին տալիս իրենց քաջագործութիւնները, արշաւանքները և իրենց պատկերի հետ փորագրել տալիս քարեայ սիւների և մանաւանդ այնպիսի բարձր ժայռերի վրայ, որ տեսանելի լինէին ամենքի համար: Վանայ սեպագիր արձանագրութիւնները փորագրուած են քաղաքի մակերևոյթից 50—60 ոտք բարձրութիւն ունեցող ժայռերի վրայ:

### Գ.

Երբ արդէն վանկագիր նշանները յայտնի էին, մնում էր դարձեալ մի աստիճանի կատարելագործութիւն և պատրաստ պէտք է լինէր զրի ամենայարմար և մարդկային առաջադիմութեան նպատակներին մեծապէս ծա-

ռայող տեսակը—տառը: Տառագրի շնորհիւ միայն մարդ կարողանում է իւր ձայնի գործարանի ամեն տեսակ հրնչիւններն արտայայտել գրով և հասկանալի դարձնել:

Եգիպտական գրից յետոյ՝ տառագրի մէջ առաջին տեղն են բռնում սեմիտական այբուբենները: Սեմիտական այբուբենով ծաղկեցան յունաց և հռովմայեցոց զրականութիւնները, այդ այբուբենի տառերով գրուեցան՝ սուրբ գիրքը, զէնդաւեստան և դուրանը. այդ այբուբենի հետ է կապուած մարդկային նորագոյն քաղաքակրթութեան առաջադիմութիւնը: Սեմիտական այբուբենի դասակարգին են պատկանում՝ փիւնիկեան, եբրայական, ասորա-բաբելական, յունական, հռովմէական, գոթական, արաբական և այլ այբուբենները: Ասորական այբուբենի ընտանիքին են պատկանում զէնդի, պարսկական, հնդկական և այլ այբու-



բենները, իսկ այժմեան եւրոպական ազգերի այբուբենները պատկանում են յունական դասակարգին՝ հոովմէականի միջնորդութեամբ: Առաջին գուտ տառագիր այբուբենը համարւում է *փինիկեան այբուբենը*, որից անմիջապէս ծագում են՝ եբրայական, ասորական և յունական տառերը: Ինչպէս որ *այբուբեն* բառը կազմուած է *այբ* և *բեն* տառերի անուններից, այնպէս էլ *Ալֆաբետ* ընդհանուր գործածական խօսքը կազմուած է յունարէն «ալֆա» և «բետա» կամ փինիկեան «ալէփ» և «բեթ» տառերի անուններից:

*Տառագիր այբուբենը* շուտով յաղթական մուտք գործեց այն բոլոր երկրներում, ուր քաղաքակրթութիւնն արդէն առաջուց ոտք էր դրել: *Տառը* աշխարհակալ գորութիւն ստացաւ և զրաւեց ազգերի մտաւոր աշխարհը: Այբուբենի շնորհիւ պահպանուեց այն ամենը, ինչ որ մարդկային հանճարը

բարձր, վեհ գաղափարներ էր յղացել: Ամբողջ աշխարհի զարգացած մարդկութեան համար տառը զարձեւ է մտքի ամենամեծ գորութիւնը:

Թէ երբ զաղարեց *Հայաստանում* սեպագրի գործածութիւնը և երբ ըսկրսեցին մեր նախնիք գրելու ժամանակ սեպագրի փոխարէն տառագիր գործ դնել՝ անյայտ է. բայց և այնպէս մեր պատմագիրների մութ ակնարկութիւններից պարզ երևում է, որ դեռ քրիստոնէութիւնից շատ առաջ հայերն արդէն գիտէին տառերով գրելու արուեստը: Եւ այս իրողութիւնը բնական պէտք է լինէր, քանի որ մեր դրացի ազգերը վաղուց արդէն գիտէին տառերով գրելու եղանակը: Հետաքրքրականն այն է, թէ արդեօք հայերն իւրեանց *սեպհական այբուբենն* ունէին, թէ գործ էին դնում ուրիշ ազգերի տառագիրը: Մեր մատենագիրների վրկայութիւնների վրայ հիմնուելով մենք



այն եզրակացութեան ենք եկել, որ մեր նախնիք ունեցել են սեպհական տառագիր այբուբեն, բայց քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ այլ ևս իւրեանց սեպհական այբուբենով չեն գրում այլ օտար: Սակայն քանի որ հայ ազգը քրիստոնէութիւնն ընդունելով՝ մեծ զարկ էր ստացել նոր ուղութեամբ առաջադիմելու և մտաւորապէս զարգանալու, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Օտար տառերի գործածութիւնը չէր կարող տեսական լինել:

Չորրորդ գարի վերջին մասի հայ սերունդն արդէն զգում է սեպհական ազգային գրի կարևորութիւնը՝ թէ կրօնական և թէ քաղաքական տեսակէտից:

## Ե.

Ազգերի պատմութեան մէջ զրի սկզբնաւորութիւնը սովորաբար վերա-

զրում են աստուածներին կամ այնպիսի մարդկանց, որոնք յարաբերութիւն ունէին աստուածների հետ, որովհետև այդպիսի մի հրաշալի ստեղծագործութիւն միմիայն աստուածների գործը կարող էր համարուել: Օրինակ եգիպտական աւանդութիւնը զրի սկզբնաւորութիւնը վերագրում է «Տաուիթ»ին, որ միևնոյն ժամանակ լեզուի և խօսքի աստուածն էր, զարգացրեց աստղագիտութեան, երաժշտութեան արուեստները և գտաւ ձիթենին: Բաբելական աւանդութիւնը զրի ստեղծագործութիւնն ընծայում է «Օաննէս»ին, որ մի էակ էր՝ կէսը մարդ, կէսը ձուկ: Ըստ չինական աւանդութեան՝ նրանց զիրը գտաւ «Փօշի»ն. մեքսիկացիներն իրենց զրի գիւտը վերագրում են «Կետալպուտլ» աստուծուն: Իրանական աւանդութիւնը զրի սկզբնաւորութիւնը վերագրում է «Տամուրաթ» արքային, որին յաջողուեց



գիրը դեբրի ձեռքից կորզել, որովհետեւ թէև բարի ոգիներն արդէն վաղուց գտել էին գիրը, սակայն դեբրի ձեռքն ընկնելով՝ անյայտ էր մնացել մինչև «Տահմուրաթի» ժամանակը: Յունացի գրի գտնողն է հանդիսանում «Նադմուսը», որ Փիւնիկիայից է գալիս: Գոթական գրի գիտը գերմանական աւանդութիւնը վերագրում է «Ուլֆիլաս»ին, թէև յայտնի է, որ Ուլֆիլասը ոչ թէ նոր գտաւ գոթական տառերը, այլ հին գերմանական «ըունէ» կոչուած նշանները կատարելագործեց՝ պակասը լրացնելով և յունական այբուբենին մօտեցնելով:

Այս աւանդութիւններից էլ երևում է, որ գրի ստեղծագործութիւնը մի անհատի գործ չէ. մարդկութիւնը շատ փորձերից յետոյ միայն պէտք է կարողանար ձեռք բերել այն, ինչ որ այսօր մեզ համար սովորական է դարձել: Գրի սկզբնաւորութեան մասին

վերոյիշեալ աւանդութիւնները թէև արտարուստ առասպելներ են, սակայն եթէ մի փոքր խորը գննենք զրանց, կտեսնենք, որ մօտենում են ճշմարտութեան: Վերցնենք օրինակ եգիպտացւոց և յունաց աւանդութիւնները. թէև առասպել է թւում, որ Տաութն է գրտնում եգիպտական գիրը, լեզուն, աստղագիտութիւնը, երաժշտութիւնը և այլն, սակայն կարող է պատահած իրողութեան ձևակերպուիլ, եթէ ընդունենք, որ Տաութ անուան տակ ծածկուած է եգիպտական քրմական դասակարգը: Անկասկած է նոյնպէս, որ փիւնիկեցոց գիրը Յունաստան փոխադրող «Կադմուսը» ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի նոր կրօն, որ Փիւնիկիայից Յունաստան տարածուեց՝ իւր հետ միասին տարածելով նոյնպէս և փիւնիկեան այբուբենը:

Մասնաւորելով մեր խօսքը հայոց գրի մասին, պէտք է ասենք, որ միև-



նոյն երևոյթն է կրկնուում: Մեր պատմութեան մէջ անթափանցելի քողով է ծածկուած հայոց գրի զարգացման ընթացքը. մեզ անյայտ է թէ՛ երբ սկսեցին հայերը սեպհական գիր գործածել և երբ դադարեցին: Միայն այնչափ կարելի է եզրակացնել, որ ունեցել ենք սեպհական տառագիր, սակայն այս գիրը չորրորդ դարի վերջերին գործածութեան մէջ չլինելով՝ բոլորովին մոռացուել էր: Ըստ մեր ազգային աւանդութեան հայոց այբուբենն էլ գտնուում է հրաշքով. «ոչ քնած ժամանակ, ոչ էլ արթուն»:

Քրիստոնէութիւնը մուտ գործեով Հայաստան, իւր հետ միասին ներմուծեց նաև յունական եւ ասորական գիրը և հալածեց տեղական գիրը, որ ամուր կապելով շղթայուած էր կուպաշտութեան հետ: Համարեան պատմական օրէնք է, որ իւրաքանչիւր նոր կրօնի հետ ազգերն ընդունել են նաև

նոր գիր. փիւնիկեցւոց այբուբենը տարածուեց Յունաստանում Փիւնիկիայից բերուած մի կրօնի հետ, իսլամութիւնը տարածեց ամեն տեղ արաբական «նեսիսի» կոչուած գիրը. հռովմէական գիրը տարածուեց արևմտեան Եւրոպայում սր. գրքի հետ, ինչպէս նաև «ղեւանագարի» և «սլաւի» կոչուած գրերը Հնդկաստանում:

Սակայն յունաց և ասորոց գրերի տիրապետութիւնը երկար չէր կարող տևել Հայաստանում, որովհետև քրիստոնեայ եկեղեցու եռանդուն պաշտօնեաները չբաւականանալով ազգային կրօնի ոչնչացմամբ՝ ձգտում էին նաև ազգային լեզուն իսախտել՝ եկեղեցու պաշտամունքը յունարէն և ասորերէն լեզուով կատարելով: Ազգն ըմբռնեց այդ դրութեան վտանգաւոր լինելը և դրա առաջն առնելն իւր կենսական խնդիրը դարձնելով ամեն կերպ աշխատեց վերականգնել ազգային գիրը,



լեզուն և գրականութիւնը: Այս գաղափարով տոգորուած հայ սերնդի մեծ ներկայացուցիչներն էին Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը:

Մի ժողովրդի անհատների մէջ գտնուում են յաճախ այնպիսի իղէալական անձինք, որոնք իւրեանց անձնաւորութեամբ ներկայացնում են ամբողջ ազգը. այսպիսի անհատներն իւրեանց ազգի յատկանիշ բնաւորութիւնը ներկայացնելով՝ մի որոշ ժամանակի առաջադիմութեան և մտաւոր զարգացման իրականացնողներն են լինում: Միւս կողմից էլ անհատների զարգացումը կախուած է այն ժողովրդի զարգացման աստիճանից, որի մէջ ապրում են նրանք. այս պատճառով սբ. Սահակի և Մեսրոպի մասին խօսելիս, երբէք չպէտք է մոռանալ ժամանակակից հայ սերունդը:

Կարծես նախախնամութեան կարգադրութեամբ է լինում, որ չորրորդ

դարի վերջին մասն ունենում է երկու մեծ հայ ներկայացուցիչներ, որոնք իւրեանց հանճարով և միահամուռ ուժով գլուխ բերին այն մեծ գործը, որ ժամանակակից սերնդի իղէալն էր: Այդ հանճարները վերականգնելով հայոց սեպական գիրը և դորա միջնորդութեամբ տարածելով ամբողջ հայ աշխարհում ազգային եկեղեցու և դպրութեան հաւատարիմ մշակներ, այնպիսի ծառայութիւն արին իրենց հայրենիքին, որ անգուպական է մեր պատմութեան մէջ: Չպէտք է մոռանալ նոյնպէս, որ քրիստոնէական ուսման տարածման և ժողովրդականացման գաղափարը հայոց գրի վերանորոգման ամենամեծ շարժառիթներէից մէկն էր: Սուրբ Մեսրոպը թողնելով արքունի պալատը, շրջում է Հայաստանի բոլոր անկիւնները և քառասուն ու հինգ տարի շարունակ քարոզում և աւանդում է քրիստոնէութեան հետ նաև ազգային



գաղափարը. ազգային եկեղեցիով ազգային ներքին կապ է հաստատում և ամեն տեղ դպրոցներ բաց անում:

Թէև հայ աշխարհը համարեան չորս դար առաջ էր տեսել իւր անդրանիկ քրիստոնեայ առաքեալներին և մօտ մի դար առաջ ընդունել իսկապէս քրիստոնէական վարդապետութիւնը, սակայն սր. Մեսրոպը ներկայանում է ոչ թէ միայն իբրև նոր Առաքեալ քրիստոնէական եկեղեցու, այլ նաև իբրև հարսգատ զառակ Հայաստանի: Նորան յաջողուեց վերականգնել ազգայնութեան գաղափարը, որ ճնշուել էր քրիստոնէական վարդապետութեան ազդեցութեամբ: Նա կարողացաւ քրիստոնէական գաղափարը կապակցել մայրենի գրի և լեզուի հետ՝ խրախուսուելով թէ կաթողիկոսից և թէ թագաւորից: Մայրենի գրի և լեզուի ամբողջ Հայաստանում տարածուելուն մեծապէս նպաստեց սր. Մեսրոպի և

Վարդանի դեսպանութեան յաջողութիւնը Բիւզանդիոնում: Այս յաջողութիւնը պէտք է նկատուի իբրև մեր պատմութեան ամենանշանաւոր դէպքերից մէկը. եթէ սր. Մեսրոպին արգելուէր յունաց բաժնի Հայաստանում ևս տարածելու հայկական գիրն ու լեզուն, հասկանալի է թէ այդպիսով առաջացած պառակտումը որչափ վնասակար պէտք է լինէր նոր սկսուած գործի համար:

Ջ.

Հայ ազգն ընդունելով քրիստոնէութիւնը, ոչ թէ միայն իւր հին կրօնը կորցրեց, այլ և նրա ազգայնութեան զարգացման ուղին խանգարուեց. ազգային բանաստեղծութիւնն ու առհասարակ գրականութիւնը սերտ կերպով շղթայուած էին կրօնի հետ և այդ իսկ պատճառով նոր եկեղեցու պաշտօնեա-



ներն ամեն ճիգ թափեցին դրանց հետքը ջնջելու: Եւ որպէս զի այդ խիստ զգալի շինի ժողովրդի համար, նրանք հների տեղ նոր և քրիստոնէական գաղափարներ պարունակող երգեր տաճեցին ժողովրդի մէջ: Մեր եկեղեցական նոր պաշտօնեաները մեծ մասամբ օտարներ լինելով՝ ոչինչ զգացումն չէին կարող ունենալ հայոց ազգայնութեան գաղափարի համար, այդ պատճառով անխնայ ոչնչացրին այն ամենը, ինչ որ կապուած էր հայոց հին կրօնի հետ: Նրանք վանքեր և դպրոցներ հիմնելով Հայաստանում, թէև ազգի առաջադիմութեան նպաստեցին, սակայն այդ էլ ի վնաս ազգայնութեան գաղափարի եղաւ, որովհետև այդ հիմնարկութիւններն օտար լինելով՝ դրանց տուած դաստիարակութիւնն էլ օտար էր. տիրող լեզուն ևս ոչ թէ ժողովրդի մայրենի լեզուն

էր, այլ յունարէնն և ասորերէնը:

Անս այդ միջոցին սբ. Մեսրոպի վերանորոգած հայոց գիրը պատճառ է լինում, որ հայոց մտաւոր զարգացումն ու առաջադիմութիւնը կրկին ուղիղ շաւղով առաջ գնայ և այդպիսով շուտով հասնում է հայ գրականութեան ոսկէ դարը: Այն ազգը, որ մոռացութեան տալով իւր սեպհական հին գիրը՝ մուրացկանութեամբ սովորում և գործ էր անում յունաց, պարսից և ասորոց տառերը, կարճ ժամանակից յետոյ տէր եղաւ մարդկային մտքի նշանաւոր արտադրութիւններից մէկի, սբ. գրքի գեղեցիկ թարգմանութեան, որ շատ եւրոպացի գիտնականների ասելով ամենաճիշտ թարգմանութիւնն է և կոչուել է «*Թագուհի թարգմանութեանց*»: Թէ՛ սրբախի ընդունելութիւն գտաւ սբ. Մեսրոպի գործը հայ ժողովրդի մէջ, կարելի է պարզ տեսնել հայ պատմադիրների խօսքերից. «Ամե-



նայն անձն յորդորեալ փափաքէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէ՝ յասորի տանջանացն գերծեալք ի լոյս խնդային»։—*Ղ. Փարպեցի*։

Ամբողջ ազգը ոգևորուած էր՝ լսելով եկեղեցու բեմից և դասից իւր մայրենի բարբառի հնչիւնները. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս հայոց անպայման սքանչելի լինէր... անդ էր այնուհետև սրտալիը ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն»։  
—*Կորիւն Սքանչելի*։

Հայոց լեզուի և դպրութեան հաստատման ժամանակին նուիրուած մեր Սքանչելի Կորիւնի այս գեղեցիկ խօսքերը ճշտիւ համապատասխանում են գերմանական բանաստեղծ Ուլրիխ ֆօն Հուտտէնի—որ ժամանակակից էր գերմանական կրօնական մեծ յեղափոխութեան—բացազանչութեանը. «Մ'վ դար, ուամուկքը ծաղկում են, ոգիքն արթնանում, ապրելը զուարճութիւն է»։

Այն ազգը, որ Աստուծոյ տաճարում պէտք է լսէր յունարէն կամ ասորի լեզուով արտասանած «Հայր մերը», շուտով ունեցաւ յունական ամենաերևելի փիլիսոփաների հեղինակութիւնների թարգմանութիւնը. ամենքն աշխատում էին մայրենի լեզուն սովորել. բազմաթիւ երիտասարդներ զիմում էին Յունաստան, Եգիպտոս և գիտութեան այլ կենդրոններ՝ իւրեանց ուսման ծառարը յագեցնելու և հայրենեաց առաջադիմութեան նպաստելու։

Հինգերորդ դարի հայ սերնդի ճրգտումը՝ կատարելապէս ուսանել յունաց և ասորոց լեզուներն, որպէս զի այգպիսով ծաղկեցնեն մայրենի լեզուն ու գրականութիւնը, կարելի է համեմատել այն շարժողութեան հետ, որ տեղի ունեցաւ *Խտալիայում* XIV-րդ և *Գերմանիայում* XV-րդ դարում։

Միջին դարերում գերմանական և ռոմանական ազգերը, չնայելով իրենց



առանձնայատուլութիւններին, ունէին մի  
ընդհանուր կապ. եկեղեցու կապը միաց-  
րել էր բոլորին. լատիներէնը համարուում  
էր մի ընդհանուր եւրոպական, եկեղեցա-  
կան լեզու: Հոգևորականներն ամեն տեղ  
խօսում և գրում էին այդ լեզուով. ամեն  
տեղ եկեղեցական պաշտամունքը կա-  
տարուում էր լատիներէն լեզուով: Տասն-  
ևչորսերորդ դարից սկսուում է յունաց  
գասական գրուածքների ուսումնասի-  
րութիւնը և գրա հետ միասին մայրենի  
լեզուով գրելու ձգտումը: Առաջին փոր-  
ձերը լինում են Իտալիայում. Դանտէն,  
Բօկաչիօն, Պետրարկան հարթեցին այդ  
շաւիղը. այս երեք հանճարները զար-  
գացրին մի գեղեցիկ բանաստեղծական  
ու վիպական նոր մայրենի լեզու և գրա-  
կանութիւն: Իտալիայի գեղարուեստ  
լանկարկող սերունդը սքանչանում էր  
դասական մատենագիրների գեղեցկու-  
թեամբ. յունական դիցարանութիւնն  
աւելի էր հիացնում նրան, քան քրիս-

տոնէական վարդապետութիւնը: Գեր-  
մանիան ևս հետեւելով դասական ուղ-  
ղութեան, ուսումնասիրում է յունա-  
րէնը, բայց առաւելապէս հետևում է  
քրիստոնէական վարդապետութեան:  
Սբ. գրքի գերմաներէն թարգմանու-  
թիւնն այդ ուղղութեան նշանաւոր ար-  
գասիքներից մէկն եղաւ: Սբ. գրքի  
թարգմանութիւնն է առիթ լինում գեր-  
մանացւոց մայրենի լեզուի հետզհետէ  
մշակման և գրականութեան ծաղկման:

Հինգերորդ դարի հայ սերնդի բըռ-  
նած ուղղութիւնը նոյնն էր. հայերէն  
գալրութիւնն ուսանում էին՝ սբ. գիրքը  
և եկեղեցական պաշտամունքը հասկա-  
նալու համար. յունարէն գալրութիւնն  
ուսանում էին՝ հայերէն ճիշտ թարգմա-  
նելու համար: Հայերէն գալրութիւնը  
հինգերորդ դարում այնպէս արագ չէր  
զարգանայ, եթէ անմիջապէս սբ. գիր-  
քը չթարգմանուէր և գալրութեան նպա-  
տակը գլխաւորապէս եկեղեցական հե-



ղինակութիւնների ծանօթութիւնը չը-  
լինէր: Հարկաւ, այդ նպատակին հաս-  
նելուց յետոյ, հայ դպրութիւնը կանգ  
չառաւ և իւր մէջ առաւ նաև պատ-  
մական, փիլիսոփայական և գիտու-  
թեանց ուրիշ ճիւղերը:

Քրիստոնէութիւնը մուտ գործե-  
լով Հայաստան, իւր գոյութեան կռուի  
մէջ ոչնչացրեց եղածը և տարածեց  
ժողովրդին օտար ասորերէն և յունա-  
րէն լեզուն ու գիրը. այս հանգաման-  
քից առաջացաւ այն անբնական դրու-  
թիւնը, որի դէմ մաքառեց հինգերորդ  
դարի առաջին մասի հայ սերունդը և  
յաջողութիւն ունեցաւ:

Հայոց այբուրենի վերանորոգման  
հետևանքներն այսպէս համառօտելուց  
յետոյ, տեսնենք թէ մեր մատենագիր-  
ներն ինչպէս են պատմում հայոց գրի  
«գիւտը»: Սրա համար երեք նշանաւոր  
ազբիւրներ ունենք. ա. *Կորին Սքան-  
չելու* գրած սբ. Մեսրոպի վարքագրու-

թիւնը, բ. *Մովսէս Խորենացու հայոց  
պատմութիւնը* և գ. *Ղազար Փարպե-  
ցու հայոց պատմութիւնը*: *Կորին Սքան-  
չելին* սբ. Մեսրոպի աշակերտն ու  
գործակիցն էր և նկարագրում է իւր  
աչքով տեսածը և ականջով լսածը:  
Մովսէս Խորենացին նոյնպէս ժամա-  
նակակից է սբ. Մեսրոպին, նրա աշա-  
կերտն է անուանում իրեն, բայց ար-  
տասանմանից վերագառնալով՝ այլ ևս  
կենդանի չէ գտնում նրան: Մի փոքր  
յետոյ է գրում Ղազար Փարպեցին  
հայոց պատմութիւնը, սակայն սա էլ  
սբ. Մեսրոպի անմիջական աշակերտ  
*Աղանի* մօտ էր ուսել և գասուում է Մես-  
րոպի կրտսեր աշակերտների շարքը:

Անձ այս երեք մատենագիրների  
ասածներինքն ենք հիւսում հետևեալը:

Ե.

Տարօն գաւառի Հացեկաց գիւղիցն  
էր սբ. Մեսրոպը, որ կոչուում էր նաև



Մաշտոց. նրա հօր անունը վարդան էր: Մեսրոպը մանկական հասակում աշակերտում է Մեծն ներսէս կաթողիկոսին և սովորում է յունարէն լեզուն ու դպրութիւնը: Ներսէս Մեծի մահից յետոյ պատանի և յունագէտ Մեսրոպը գալիս է Արշակունեաց արքունի պալատը և Խոսրով թագաւորը նրան զինուորական աստիճան տալով՝ արքունի ղիւանում քարտուղարի պաշտօն է տալիս, որովհետև այն ժամանակ հայոց թագաւորի գործերը՝ վճիռները և հրովարտակները ասորի և յոյն լեզուով էին գրուում: Այդ ժամանակ հայոց աշխարհի հագարապետն էր Առաւանք: Մեսրոպն ընդունակութիւն ցոյց տալով զինուորական արուեստի մէջ՝ շուտով սիրելի է դառնում զօրավարներին: Սակայն Մեծն ներսէսի դաստիարակութեան ազդեցութիւնը նրա սրտում կրօնական կայծեր էր թողել. զինուորական փայլուն ասպարիզում ևս չա զբաղուում է

կրօնական գրքերի ընթերցանութեամբ և մի քանի տարի շարունակ անբիծ վարելով քարտուղարի պաշտօնը՝ թողնում է արքունի ծառայութիւնը, զինուորական կեանքը, նոյն իսկ աշխարհիկ կեանքը և վանական դառնում:

Այնուհետև սբ. Մեսրոպը միայնակեաց կեանք է վարում և իւր մարմինը ենթարկում զանազան տեսակ չարչարանքի. նրա համբաւը լսելով՝ շատ երիտասարդներ հաւաքուում են նրա շուրջը և աշակերտում նրան: Այնուհետև սբ. Մեսրոպն իւր աշակերտներով գնում է Դողթան գաւառը, ուր հեթանոսական պաշտամունքը դեռ շարունակուում էր: Սբ. Մեսրոպն այս գաւառի իշխան Շաճիթի օգնութեամբ կարողանում է վերջ դնել հեթանոսական կրօնի պաշտամանը և քարոզում է քրիստոնէութեան սկզբունքները: Դողթան գաւառում յաջողութեամբ կատարելով առաքելական պաշտօնը, սբ.



Մեսրոպն այդտեղից գնում է Միւնեաց աշխարհը և երկրի իշխան Վաղինակի օժանդակութեամբ այդտեղ ևս քարոզում ու ժողովրդին հասկացնում է քրիստոնէական կրօնի ճշմարտութիւնները:

Այս առաքելական շրջագայութիւնների ժամանակ նա տեսնում է, որ իսկապէս ժողովուրդը ոչինչ չէ հասկանում եկեղեցու պաշտօնեաների կարգացածից և ինքը ստիպուած է լինում կարգացածը թարգմանել հայերէն. իսկ եկեղեցու սովորական պաշտօնեաները չկարողանալով թարգմանել իրենց կարգացածը՝ իսկապէս աւետարանի բովանդակութիւնն անհասկանալի էր մընում ժողովրդին: Երանելի Մաշտոցը հոգուով տրտմում էր, տեսնելով որ հայ երիտասարդները մեծ աշխատանքով և ահագին նիւթական կորուստներով մաշում էին իրենց կեանքը հայրենիքից դուրս՝ ասորոց դպրոցներում, որովհետև հայոց եկեղեցու ծիսակա-

տարութիւնը տեղի էր ունենում ասորոց և յունաց լեզուով, որ բոլորովին անհասկանալի էր ժողովրդին: Սբ. Մեսրոպն երկար ժամանակ մտածմանց մէջ է ընկնում և փղձկում, մանաւանդ որ կային հայերէն նշանագրեր, որոնցով կարելի էր սեպհական գրով և լեզուով ժողովրդի սիրտը շահել: Նա լուրջ կերպով մտածում է վերականգնել հայոց այբուբենը և երկար ժամանակ զբաղւում է գննագան փորձերով:

Երբ Սահակ Պարթևը կաթողիկոս ընտրուեց, Մեսրոպը շտապեց գնալ նոր կաթողիկոսի մօտ և յայտնեց նորան իւր բազմաժամանակեայ մտատանջութեան խնդիրը: Սբ. Սահակը յայտնում է, որ ինքն էլ վաղուց մտածում է այդ խնդրի մասին և քաջալերելով նրան, ասում է. վերցրո՛ւ քեզ հետ և ուրիշ օգնական քահանաներ, որոնց ես կնշանակեմ, և միասին աշխատեցէք. ուր որ դժուարանաք վանկերը



կարգելիս, բերէք ինձ մօտ և ես կուղ-  
ղեմ, որովհետև շատ հեշտ է քո ցան-  
կացածը գտնել: Սակայն մենք առաջ  
պէտք է թագաւորին իմաց տանք այս-  
պիսի մեծ և կարեւոր գործի պէտքը.  
ոչ շատ ժամանակ առաջ, եկեղեցում  
այդ խնդրի կարեւորութեան մասին խօ-  
սելիս մէկն ասել է թագաւորին, թէ մի  
զիւղում մի եպիսկոպոսի մօտ տեսել եմ  
հայերէն նշանագրեր. թագաւորն յի-  
շում էր այդ խօսքերը և պատմեց ինձ:

Այս խօսակցութիւնից յետոյ սբ.  
Սահակը ներկայացնում է Մեսրոպին  
Վռամշապուհ թագաւորին և պատմում  
նրա մտազրույթեան մասին: Վռամշա-  
պուհն անձամբ պատմում է, որ երբ  
ինքը Միջագետքումն էր գտնուում, Հա-  
րէլ անունով մէկ քահանայ յայտնեց  
իրեն՝ թէ իւր ազգական Դանիէլ եպիս-  
կոպոսն ունի հայոց լեզուին յարմարեց-  
րած տառեր. սակայն ինքը, թագաւորն  
անուշազիր է թողել Հարէլի ասածը:

Սբ. Սահակն ու Մեսրոպը լսելով  
այս պատմութիւնը, ուրախանում են  
և թագաւորին շտապեցնում, որ զբա-  
ղուի այս խնդրով, որովհետև հայոց  
աշխարհի համար այդ գիւտը մեծ նշա-  
նակութիւն ունի և իրեն արքային էլ  
այդ աւելի մեծ պատիւ կբերէ ապա-  
գայում, քան թէ նրա աշխարհային  
իշխանութիւնը: Այս խօսքերը թագա-  
ւորին մեծ բաւականութիւն են պատ-  
ճառում և նա փառաբանում է Աստը-  
ծուն, որ իւր թագաւորութեան ժա-  
մանակ այդպիսի մի մեծ իրողութիւն  
պէտք է տեղի ունենայ:

Առանց ուշացնելու Վռամշապուհ  
թագաւորը Վահրիճ անունով մէկին  
հրովարտակով ուղարկում է Միջա-  
գետք՝ Հարէլ քահանայի մօտ, որ թա-  
գաւորին յայտնել էր հայոց այբուբենի  
գոյութեան մասին: Հարէլ քահանան  
ստանալով արքայական հրովարտակը՝  
շտապում է Դանիէլ եպիսկոպոսի մօտ



և անձամբ նրանից սովորելով հայոց  
այբուբենը, ինքը գալիս է Հայաստան  
և այբուբենը յանձնում սբ Մահակին  
ու Մեսրոպին: Սրանք հարկաւ ցնծու-  
թեամբ ընդունում են այբուբենը և  
թագաւորից իրաւունք ինդրում, որ  
նոր դպրոցներ բանան և հայերէն այ-  
բուբենը սովորեցնեն աշակերտներին:  
Վառաժապուհը թոյլ է տալիս և սբ.  
Մեսրոպն երկու <sup>անգամ</sup> շարունակ այդ  
այբուբենի գրերով գրել-կարգալ է սո-  
վորեցնում: Սակայն սբ. Մեսրոպը  
տեսնելով, որ այդ այբուբենի տառե-  
րը բաւական չեն հայոց լեզուի վան-  
կերն ու կապերը արտայայտելու հա-  
մար, ինքն անձամբ գնում է Միջա-  
գետք Գանիէլի մօտ, բայց նոր բան  
չգտնելով այնտեղ՝ գնում է Եղեսիա  
հեթանոս ճարտասան Պղատոնից խոր-  
հուրդ հարցնելու: Պղատոնն ուրախու-  
թեամբ ընդունում է նրան, բայց ինքն  
էլ չկարողանալով օգնել՝ խորհուրդ է

տալիս Մեսրոպին դիմել Եպիփանոսին,  
որ իւր նախկին ուսուցիչն էր եղել:  
Սբ. Մեսրոպը Եղեսիայի եպիսկոպոս  
Բարիլասի օգնութեամբ գնում է Փիւ-  
նիկէ և այնտեղից Սամուսատ, որտեղ  
ապրում էր վախճանուած Եպիփանոսի  
աշակերտ Հռոփանոսը: Այստեղ նա եր-  
կար ժամանակ և համբերութեամբ աշ-  
խատում է իւր նպատակին հասնել,  
այսինքն հայոց այբուբենը կատարե-  
լագործել. նրա ջանքերը պսակւում են  
յաջողութեամբ և իւր սուրբ աջով մի  
նոր եւ սքանչելի ծնունդ է առաջ բե-  
րում: ձեակերպում է ամբողջ այբու-  
բենի տառերը, նրանց անունները, դա-  
սաւորութիւնն ու հնչիւնները կարգի  
բերում և լրացնում: Հռոփանոսն այդ  
այբուբենի տառերին վայելուչ ձև է  
տալիս՝ որոշելով նրանց երկարութիւնն  
ու հաստութիւնը: Այս գործում սբ.  
Մեսրոպին օգնում են յունարէն իմա-  
ցող իւր շորս օգնական քահանաները,



որոնց անունները հետեւեալներն են. *Յովհանն, Եկեղեաց գաւառից, Յովսէփ, Պաղանական տանից, Տէր, Խորձէնից և Մուշէ, Տարօնից:*

Սբ. Մեսրոպն իւր օգնականներով վերադառնում է Հայաստան. սբ. Սահակը և Վռամշապուհ թագաւորը ցընծութեամբ դիմաւորում են նրան Ռահ գետի մօտ և մեծ պատուով ընդունելով՝ տօնախմբութիւններ են կազմում այս նշանաւոր իրողութեան առիթով:

Այնուհետև ամեն տեղ դպրոցներ էին բաց անում և բազմաթիւ աշակերտներին նոր գրով հայերէն էին սովորեցնում. ամեն մարդ ցանկանում էր հայոց լեզուն սովորել և ասորոց ու յունաց լեզուները սովորելու տանջանքից անգատուել: Բայց զեռ դժուարութիւն կար, որովհետև սբ. գրքի մասերը թարգմանուած չէին: Սբ. Մեսրոպն իւր օգնական քահանաներով չէին վստահանում Աստուածաշունչ

գիրքը յունարէնից թարգմանել, որովհետև այնչափ հմուտ չէին յունարէն լեզուին: Այս դժուար դրութիւնից դուրս գալու համար՝ ժողովուում են հայոց աշխարհի բոլոր աւագ քահանաները, նախարարները, տանուտէրները և սբ. Մեսրոպի առաջնորդութեամբ գնում են Վռամշապուհ թագաւորի մօտ և այդտեղ բոլորը միասին աղաչում են սբ. Սահակ կաթողիկոսին, որ յանձն առնէ Աստուածաշունչ գրքի յունարէնից-հայերէն թարգմանելու ծանր աշխատանքը: Աւագ քահանաներն ասում են սբ. հայրապետին. սբ. Մեսրոպը կարգի է բերել արդէն վաղուց գրուած հայերէն տառերը, որի գործադրութեան համար ոչ ոք չէր հոգացել և իզուր և անօգուտ աշխատանք էին թափել ասորոց լեզուն սովորելու. ժողովրդի մեծամասնութիւնը եկեղեցուց դուրս էր գալիս առանց բան հասկանալու, իսկ ուսուցիչները յոգուց հանելով և



հառաչելով գղջում էին իւրեանց զուր աշխատանքի մասին, որովհետեւ տեսնում էին, որ ժողովրդից ոչ ոք օգուտ չէր քաղում իւրեանց հոգևոր խրատներից. այսպէս տեսց, մինչև որ գտնուեց զիրը: Արդ, ինչպէս որ սբ. Գրիգոր Լուսաւորիչը մեր երկիրը լուսաւորեց քրիստոնէական լուսով, քեզ է վերապահուած, իբրև նորա շառաւիղին, լրացնել քո նախնույ թողած պակասը, Աստուծոյ խօսքը հասկանալի դարձնելով ժողովրդեան համար. դու պէտք է թարգմանես սուրբ զիրքը, որովհետև այդ բանը, բացի քեզանից, ոչ ոք չի կարող անել Հայաստանում:

Սուրբ Սահակը լսելով թագաւորի, սուրբ Մեսրոպի և մեծամեծների խընդիրը, հոգևով ուրախանում է և խոստանում՝ կատարել այդ գործը. այնուհետև նա զիշեր ու ցերեկ զբաղուելով՝ թարգմանում է հին և նոր կտակարաններն ու մարգարէից զբքերը:

Այս մեծ գործը գլուխ բերելով՝ սբ. Սահակը կարգադրութիւն է անում բազմացնել զպրօցների թիւը և հայոց լեզուով աւանդել և ուսուցանել Աստուծոյ կենդանի խօսքը: Ժողովուրդն սկսում է մեծ բազմութեամբ եկեղեցի յաճախել՝ հայերէն լսելու սուրբ պաշտամունքը և գիտակցաբար ըմբռնելու սուրբ աբարողութիւնները: Եկեղեցիները պայծառանում են. շատանում է քարոզիչների թիւը, որոնք ժողովրդի մայրենի լեզուով մեկնում են սբ. զիրքը և հոգևոր մխիթարութիւն տալիս ժողովրդին:

Այնուհետև սբ. Մեսրոպը նորից սկսում է իւր նախկին պաշտօնը. քարոզում է և զպրօցներ բանալով՝ ուսուցանում է նոր այբուբենով. նախ գնում է Մարաց կողմերը, յետոյ Գողթան և Սիւնեաց աշխարհը:

Սուրբ Մեսրոպը տեսնելով թէ օրշափ բարերար ազդեցութիւն է անում ժողովրդի հոգեկան կրթութեան



վրայ մայրենի լեզուով ու գրով ական-  
դած քրիստոնէութիւնը, բուն քրիս-  
տոնէական ոգուով վառուած՝ մտածում  
է նաև հայոց դրացի և հաւատակից  
ազգերին այդպիսի մխիթարութիւն  
պատճառել: Անձամբ գնում է Վրաս-  
տան, ներկայանում է վրաց Բակուր  
թագաւորին և իւր միտքը յայտնում  
նրան. Բակուրը պատուով ընդունում  
է նրան և ամեն յարմարութիւն տա-  
լիս: Այնուհետև սբ. Մեսրոպը վրացի  
«Ջաղա»ի օգնութեամբ կազմում է վրա-  
ցերէն լեզուի այբուբենը և նրանց էլ  
միջոց տալիս՝ իւրեանց մայրենի լե-  
զուով ու գրով ուսուցանելու դպրոց-  
ներում ու եկեղեցիներում: Յետոյ իւր  
աշակերտներից երկուսին թողնելով  
Վրաստանում, ինքը գնում է Աղուանք  
և նրանց թագաւոր Արսվաղէնի և ե-  
պիսկոպոսապետ Երեմիայի օժանդա-  
կութեամբ ժողովում է աշակերտներ և  
ուսուցանում: Այստեղ ևս սբ. Մեսրո-

պին յաջողում է Բենիամին հմուտ  
թարգմանի օգնութեամբ՝ աղուանից  
լեզուի այբուբենը կազմել: Այս փորձի  
յաջող հետևանքներն էլ տեսնելով իւր  
աշակերտ Յովնաթանին թողնում է  
Աղուանից երկրում՝ սկսած գործը շա-  
րունակելու, իսկ ինքը վերադառնում  
է Հայաստան:

## Ը.

Երբ պաշտից բաժնի Հայաստա-  
նում այսպէս յաջող տարածւում էր  
հայոց նոր զերն ու դպրութիւնը, յու-  
նաց բաժնի Հայաստանում՝ երկրի կա-  
ռավարիչներն արգելում էին հայերէն  
գրի գործադրութիւնը: Սբ. Սահակն  
այդ խոչնդոտն էլ վերացնելու նպա-  
տակով՝ սբ. Մեսրոպին և իւր թոռը  
Վարդանին ուղարկում է Բիւզանդիոն  
երեք նամակով: Նամակներից մէկն  
ուղղուած էր Թէոդոս կայսրին, երկ-



րորդը՝ Ատտիկոս եպիսկոպոսին, իսկ երրորդը՝ Անատոլիոս զօրավարին:

Թէոդոս կայսրին ուզարկուած նամակի մէջ սբ. Սահակը գանդատուում է յունաց բաժնի Հայաստանի կառավարիչներին, որ իրեն արժանավայել ընդունելութիւն չեն ցոյց տուել և այնքան ատելութեամբ են վերաբերուել, որ մինչև անգամ սբ. Մեսրոպի կազմած այրուբենն էլ չեն թոյլ տուել գործադրել. վերջը խնդրում է կայսրին, որ հրամայի Յունա-Հայաստանի կառավարիչներին. «ընդունել զմեզ և զվարդապետութիւնս մեր»: Բիւզանդիոնի եպիսկոպոս Ատտիկոսին և Անատոլիոս զօրավարին զրած նամակներում սբ. Սահակը Մեսրոպին անուանում է մեր ուսուցիչ և մեր աշխարհի ուսուցիչ նշանաւոր տիտղոսով: Բիւզանդիոնում զեսպանութիւնն ընդունուում է կայսեր կողմից մեծ պատուով և վերադառնում Հայաստան՝ կայսեր

և Ատտիկոս եպիսկոպոսի նամակներով:

Թէոդոս երկրորդ կայսրը Սահակ Պարթևին գրած պատասխանի մէջ յանդիմանում է կաթողիկոսին՝ թէ ինչո՞ւ է միացել պարսից թագաւորի հետ և մանաւանդ թէ՛ արհամարհելով յունաց զիտնականներին՝ ատորոց զիտնականներին է զիմել տառերի զիւտի համար. այդ պատճառով էլ, ասում է կայսրը, ես համաձայն էի, որ իմ պաշտօնեաները արհամարհեցին և արգելեցին նոր գրերի մուտքը Յունա-Հայաստանում: Բայց որովհետև Մեսրոպը պատմեց մեզ՝ թէ այդ զիւտը Աստուծոյ շնորհիւ եղաւ, զրեցինք մեր պաշտօնեաներին, որ թոյլ տան նորագիւտ գրով ուսուցանելու և Քեզ էլ պատուով ընդունելու...: Քեզ պատուելու համար՝ Վարդանին Ստրատուլատ կարգեցինք, իսկ Մեսրոպին առաջնակարգ վարդապետների կարգը դասեցինք:



Ատտիկոս եպիսկոպոսն ևս իւր կողմից յանդիմանում է սբ. Սահակին, որ նա տառերի գիւտի համար փոխանակ Բիւզանդիոն դիմելու և Յովհան Ոսկերեքանից խորհուրդ հարցնելու, ասորական գիտնականներին է դիմել. սակայն նոյնպէս ուրախութիւն է յայտնում, որ վերջը սուրբ հոգւոյ շնորհիւ է տեղի ունենում այբուբենի գիւտը, և յայտնում է, որ կայսեր հրամանով իրաւունք է տրւում սբ. Սահակին՝ նոր դպրութիւնն ուսուցանելու Յունա-Հայաստանում:

Այս թոյլտուութեան հիման վրայ սբ. Մեսրոպը վերագառնալով յունաց բաժնի Հայաստան, անմիջապէս ամեն տեղ դպրոցներ է բաց անում և նոր այբուբենով գրել-կարդալ սովորեցնում: Մէկ գաւառում յաջողութեամբ առաջ տանելով գործը՝ իւր աշակերտներին կարգում է տեսուչներ, իսկ ինքը գնում մի ուրիշ գաւառ՝ նոյնը շարունակելու:

Միւս կողմից առաջ էր գնում թարգմանութեան գործը. Յովսէփ և Եգնիկ կողբացի աշակերտներն ուղարկւում են Միջագետքի Եղեսիա քաղաքը, որպէս զի սուրբ հարց գրուածքները թարգմանեն հայերէն և բերեն. սրանք նամակներ ստանալով, թէ սբ. Սահակը և Մեսրոպը ուրիշներին պէտք է Բիւզանդիոն ուղարկեն նոյն նպատակի համար, անմիջապէս թողնում են Եղեսիան և ուղևորւում Կ. Պօլիս: Սբ. Մեսրոպի Դևոնդ և Կորիւն աշակերտները բարի նախանձով լցուած դէպի իւրեանց ընկերները, իրանք ևս շտապում են գնալ Բիւզանդիոն նրանց մօտ. նոյնն են անում և Յովհան ու Արձան աշակերտները, որոնք վաղուց ուղարկուած էին, բայց Կեսարիայում մնալով՝ ուշացել էին: Սրանք բոլորն էլ սիրով ընդունւում են Բիւզանդիոնում և ուսումնասիրելով յունարէն լեզուն ու գրականութիւնը՝ թարգմանու-



Թեամբ են պարագում:

Եփեսոսի ժողովից յետոյ, երբ մեր Թարգմանիչները վերադառնում են Բիւզանդիոնից, իւրեանց ուսուցիչներին, սբ. Սահակին և Մեսրոպին, գտնում են Տարօնի Աշտիշատում և ներկայացնում են ժողովի կանոններն ու սբ. զբքի ստոյգ օրինակները:

Այսպիսով այբուբենի զիւտով ամբողջ Հայաստանում մի նոր կեանք է սկսւում. թէ մանուկները և թէ չափահասները սովորում են իրենց մայրենի լեզուն և վերջինիս միջոցով հասկանում ու կարգում են եկեղեցական գրուածքները: Իրական շարժումը մի նոր ոգի է առաջացնում ազգի մէջ և բոլորն էլ միահամուռ ձգտում են հոգեոր միութեան. ազգային գաղափարը կենդանութիւն է ստանում և քաղաքականապէս երկուսի բաժանուած երկրում ու ժողովրդի մէջ հաստատուն միութեան կապ առաջացնում, որի ան-

հրածեշտութիւնը շուտով պէտք է երևար: Ասորական ազդեցութիւնն ու դպրութիւնը հետզհետէ տեղի է տալիս. աւելանում է յունական դպրութեան ազդեցութիւնը, բայց այս հանգամանքը այլ ևս վտանգաւոր չէր կարող լինել. ազգային գիրն ու գրականութիւնը սբ. Սահակի և Մեսրոպի տաղանդաւոր աշակերտների շնորհիւ շուտով արիւն ու մարմին դարձաւ հայ ժողովրդի համար, այս պատճառով և յունական գիտութիւնը միմիայն ազգային գրականութեան բարգաւաճմանը կարող էր ծառայել:

Սբ. Սահակ Պարթևը *յիտուն եւ մէկ տարի բեղմնաւոր կերպով վարելով կաթողիկոսական ծանր պաշտօնը՝ քաղաքական շատ դժուար հանգամանքներում յաւերժայիշատակ անուն թողեց նաև հայոց մատենագրութեան մէջ՝ ամեն կերպ նպաստելով և մասնակցելով՝ թէ նոր այբուբենի կազմակերպութեանը*



և թէ սբ. գրքի թարգմանութեանը: Հայ եկեղեցին նրան սրբերի զասը կարգեց և հայ ժողովուրդն էլ իւր անմահ որդոց մատեանի մէջ ոսկէ տառերով գրոշմեց Սահակ Պարթեւ անունը:

Սբ. Սահակը վախճանուեց 439 թ. նաւասարդ ամսի վերջին օրը, իւր ծննդեան տարեդարձին: Նաւասարդը մեր նախնեաց հաշուով տարուայ առաջին ամիսն է և համապատասխանում է <sup>սեպտեմբ</sup> օգոստոս ամսին:

Ամբողջ հայութիւնը դառնապէս սղալով իւր հանճարեղ և մեծ կաթողիկոսի մահը՝ արքայական պատիւներով թաղում է նրա թանկագին աճիւնը Աշտիշատում, որ կաթողիկոսական կալուածք էր:

Հայաստանի այդ լուսաւորիչ աստղի ընկնելուց յետոյ կաթողիկոսական տեղապահ է կարգւում՝ սբ. Սահակից յետոյ հայութեան ամենամեծ հեղինակութիւն ունեցող հոգևորականը, սբ.

Մեսրոպը: Սակայն հազիւ վեց ամիս անցաւ և անձ ընկաւ նաև երկրորդ պայծառ լուսատուն, հայ աշխարհի ուսուցանող սբ. Մեսրոպը, որի մասին մեր մեծ պատմաբանը, Մովսէս Խորենացին ասում է. «գերազանցեց այն ժամանակի բոլոր առաքինի մարդկանցը»:

Սբ. Մեսրոպը վախճանուեց Վաղարշապատում, մեհեկան ամսի 13-ին. մեհեկանը համապատասխանում է փետրուար ամսին, ուրեմն 440 թ. փետրուարին. 17-ը: <sup>440.</sup>

Սուրբ վարդապետի աշխարհային մնացորդներն ամփոփելու համար վէճ է ծագում. ոմանք ուզում են նրա նըշխարները թաղել իւր բնագաւառ Տարսուսում, ոմանք Գողթն գաւառում, ուր նա քարոզել էր առաջին անգամ, ոմանք էլ ուզում էին Վաղարշապատում թաղել. բայց յաղթող է հանդիսանում հայոց աշխարհի հազարապետ Վահան Ամատունին, որ սրբի մարմինը շքեղ



հանդիսաւորութեամբ տանում է իւր սեպհական Օշական գիւղը և այնտեղ գետնին յանձնում:

Թէ սրչափ առաքինի և սուրբ մարդու հոշակ էր վայելում սբ. Մեսրոպն իւր ժամանակակիցների մէջ, պարզ երևում է Մովսէս Խորենացու այն վկայութիւնից՝ թէ աղօտ խաչի նշանով լոյս շողաց այն տան վրայ, ուր երանելին հոգին աւանդեց և Օշականի ճանապարհին լուսոյ այդ շողքը շարունակ դազազի վրայ էր, մինչև գերեզման իջեցնելը:

Օշական գիւղը, ուր ամփոփուեցաւ սբ. Մեսրոպի մարմինը, գտնւում է սբ. Էջմիածնից գէպի հիւսիս, մօտ երկու ժամ հեռաւորութեամբ Վաղարշապատից. այժմ այդ գիւղը Մայր Աթոռի սեպհական կալուածական գիւղերից մէկն է և մօտ 300 տուն բնակիչ ունի: Սբ. Մեսրոպի գերեզմանի վրայ արդէն Վահան Ամատունին մի

հոյակապ եկեղեցի էր կառուցել, որ 1639 թ. նորոգեց Փիլիպպոս կաթողիկոսը: Իսկ այժմեան փառահեղ, սրբատաշ քարից շինած, տաճարը կառուցեց երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսը՝ Ռուսաստանի հայոց նուէրներով, 1879 թ.: Եկեղեցու սեղանի վէմ քարի տակ գտնուող այրի մէջ է ամփոփուած սբ. Մեսրոպի, մեշ ազգային գրի ու գրականութեան հիմնադրի խնկելի աճիւնը:


Տասն եւ հինգ դար շարունակ սրբան արցունք է թափուել այդ սուրբ հողակոյտի վրայ, սրբան սիրտ յուզուել, սրբան ծունկ չոքել և սրբան շրթունքներ են շփուել այդ՝ ամբողջ հայութեան հետ անբախտելի կերպով կապուած, անմոռանալի շիրմին: Ո՛րչափ տարբեր զգացմունքի արտայայտութիւններ են եղել այդ արցունքները՝ նայելով թէ սր դարում և ի՞նչ ժամանակ են ցօղել զրանք սրբի դամբա-



րանք. կայ արցունք ուրախութեան և  
ցնծութեան, կայ և՛ վշտի ու թշուա-  
ռութեան:

Սբ. Սահակի և Մեսրոպի անուն-  
ները հինգերորդ դարի սկզբից մինչև  
մեր օրերը անբաժան մնաց հայ գրա-  
կանութիւնից և դարձեալ անբաժան  
կմնայ, մինչև որ վերջին հայն հայկե-  
րէն «նխ»-ով կփչէ իւր վերջին շունչը:

Քաղաքակրթուած երկրներում այդ-  
պիսի անմոռանալի անձանց յիշատա-  
կը յարգում են՝ մեծաժախ և հոյակապ  
արձաններ կանգնեցնելով քաղաքների  
հրապարակներում և թանգարանների  
սրահներում. մեր նախահայրերն էլ  
պակաս արձաններ չեն քանդակել՝  
դրանց անունները դասելով սրբերի  
շարքը և եկեղեցու դասից շարունակ  
հնչեցնելով՝ ի լուր հայ ժողովրդի:




«Ազգային գրադարան»



NL0122697





003

Z-42